Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ
a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

72/4168/ 19 ապրիլի 2012 հինգշաբթի

ISSN 1829-2224
12060
9 771829 222003

# Ա

## Ով ում դեմ է քարոզում

Երեկ «Գելափի» հրատարակած սոցիոլոգիական հարցման տվյալները տարօրինակ կերպով լայն արձագանք չեն գտել քաղաքական ուժերի կողմից: Կամ արդյունքները բոլորին ձեռնտու են, կամ էլ, ձեռնտու չլինելով հանդերձ, արժանահավատ են թվում: Այդ արդյունքներից, մասնավորապես, պարզ է դառնում, որ բացի երեք մանր կուսակցություններից, որոնք, շատերի կարծիքով, ներդրվել են իշխանությունների կողմից՝ ՀԱԿ-ի մասին փիս-փիս բաներ ասելու համար, մնացած քաղաքական ուժերը կարող են պայքարել ԱԺ-ում հայտնվելու համար:

Ըստ այդ հարցման՝ «պրեմիեր լիգայում» են, ինչպես եւ սպասվում էր, ՀՀԿ-ն եւ ԲՀԿ-ն: Թերեւս ապարատային, կազմակերպչական եւ նյութական մակարդակով նրանց միջեւ պայքար է ընթանում, բայց արտաքուստ, համենայնդեպս, նրանք իրար դեմ չեն խոսում: Ընդ որում, ԲՀԿ-ն շահեկան վիճակում է նաեւ այն պատճառով, որ նրա դեմ չի խոսում նաեւ ՀԱԿ-ը՝ որոշակի հույսեր է կապում այդ կուսակցության հետ: Ենթադրում եմ, որ մոտ ժամանակներս հրապարակավ հանդես կգա Ռոբերտ Քոչարյանը: Նա, իմ կարծիքով, ինչպես միշտ, կխոսի այն մասին, թե որքան ծաղկուն էր երկրի տնտեսությունն իր ժամանակ, եւ որքան վատն է վիճակն այսօր: Նա, հավանաբար, կասի նաեւ, թե որքան կարեւոր է ազատ եւ արդար ընտրություններ անցկացնելը, ընտրակաշառք չբաժանելը եւ վարչական ռեսուրս չօգտագործելը: Նախկին նախագահները սովորություն ունեն մոռանալու, թե ինչպես են ընտրություններն անցել իրենց իշխանության օրոք: Բայց կարեւոր է ոչ այնքան այն, թե ինչ կասի երկրորդ նախագահը, այլ այն, թե ինչպես, ինչպիսի ինտոնացիայով է նա իր մտքերը շարադրելու: Դրանից կախված՝ վերջին շաբաթվա ընթացքում ԲՀԿ-ի հռետորաբանությունը կկարծրանա կամ կմնա նույնը:

Հարցման տվյալներով՝ երկրորդ էշելոնի կուսակցությունները հիմնականում ընդդիմադիր են: Բնականաբար, նրանք քարոզում են հիմնականում իշխանության դեմ, ընդ որում, ՀԱԿ-ը՝ ճիշտ այն բառապաշարով, ինչպես 90-ականներին ՀՅԴ-ն, ԱԺՄ-ն, ՍԻՄ-ը եւ մնացածները քարոզում էին ՀՀՇ-ի դեմ՝ «երիտթուրքեր», «թալանչիներ», «սրիկաներ», «հանցագործներ» եւ այլն: Այսօրվա Դաշնակցության (ինչպես նաեւ «Ժառանգության») քննադատությունն ավելի սոլիդ է՝ չգիտեմ, թե որ ճանապարհն է ավելի արդյունավետ: Բայց հաստատ կարող եմ ասել՝ արդյունավետ չէ ՀԱԿ-ի, ՀՅԴ-ի եւ «Ժառանգության»՝ իրար դեմ քարոզելը եւ «իշխանությանը ծախվելու» ակնարկներ անելը: Կուսակցությունները, որոնք, ըստ «Գելափի» հարցումների, ունեն 9, 5 եւ 3 տոկոսանոց վարկանիշ, իրարից «ընտրող փախցնելու» խնդրով չպիտի տարվեն, այլ, իմ կարծիքով, պիտի ակտիվացնեն դեռեւս չկողմնորոշված քաղաքացիներին:

Ակնհայտ է՝ որքան շատ ընդդիմադիրներ լինեն խորհրդարանում, այնքան լավ: Ի դեպ, ի տարբերություն ցուցակների, որոնցից ոչ մեկը ինձ դուր չի գալիս, մեծամասնական կարգով ես պատրաստվում եմ ձայնս տալ ընդդիմության (տվյալ դեպքում՝ ՀԱԿ-ի) ներկայացուցչին: Իշխանությունը «ճակատի զոռով» պահպանել է այդ ընտրակարգը՝ թող մի քիչ տուժեն դրանից:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## «Ո՞ւմ դիմենք՝ են տկլոր աղջկա հետ նկարվածի՞ն»





Վերջերս «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության նախագահ Պետրոս Մակեյանը մեզ տեղեկացրել էր, որ Արթիկում խոսք է գնում 25-30 հազար դրամ ընտրակաշառքի մասին: Երեկ կենտրոնական հրապարակում կանգնած արթիկցիներից հետաքրքրվեցինք, թե արդեն սկսե՞լ են բաժանել նախատեսված գումարը: «Հլը չեն սկսել, շուտ է, մարդկանց չենք կարող զրպարտել, բայց ժուռնալիստ մարդ եք, ի՞նչ կլինի, որ մի հատ լավություն անեք, ճշտեք, թե ո՞ւմ ի նկատի ունի Մակեյանը, ո՞ւմ դիմենք, են չըփլաղ աղջկա հետ նկարվածի՞ն, թե՞ ցիլինդրով կնկա մեջտեղը հայտնվածին»: Մենք ակամայից շրջվեցինք դեպի թեկնածուների ցուցապաստառները, ու մեր ֆոտոխցիկը ֆիքսեց ԲՀԿ-ական պատգամավոր Մուշեղ Պետրոյանին ու ՀՀԿ-ական պատգամավոր, Արթիկի քաղաքապետի եղբայր Մխիթար Վարագյանին: Արթիկի հրապարակում որ կողմը շրջվեցինք, ականատես եղանք սեքսուալ ցուցապաստառների: Ամենայն հավանականությամբ թեկնածուների PR-ով զբաղվողները խորհուրդ են տվել դիտելիություն ապահովելու համար իրենց լուսանկարները տեղադրել կիսամերկ կանանց ֆոնին:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Մեր երկրում նախագահական ընտրությունների «քաստինգ» է գնում

Քաղաքական տեխնոլոգ Կարեն Քոչարյանը «Առավոտի» հետ զրույցում խոսելով առաջիկա խորհրդարանական ընտրությունների ու նախընտրական քարոզչության մասին՝ կարծիք հայտնեց, թե շատ միապաղաղ ու տխուր քարոզարշավ է ընթանում, ու հավելեց, թե առաջիկա ընտրությունները դրանց մասնակցող քաղաքական ուժերի համար հաջորդ տարի կայանալիք նախագահական ընտրություններից առաջ տեղի ունեցող փորձեր են, այն էլ ոչ թե գլխավոր, այլ նախնական: «Սա ընդամենը նախագահական ընտրությունների «քաստինգ» է»,- հայտարարեց Կարեն Քոչարյանը:

Կարդացեք էջ 2:

### Ինչպես էր ներկա մարզպետը խորոված հյուրասիրել նախկինին

Երեկ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում կոչ անելով քվեարկել մեծամասնական ընտրակարգով թիվ 21 ընտրատարածքում ՀԱԿ-ի առաջադրած թեկնածու Սեդրակ Հովհաննիսյանի օգտին՝ ՀՀ առաջին նախագահը հիշեց, երբ ՀԱԲ-ի զինաթափման օրը Արմավիրում մի միջադեպ էր եղել: Այդ օրը կալանավորվել եւ Երեւանի Արաբկիրի ոստիկանություն էին տեղափոխվել այդ ժամանակվա մարզպետ Սեդրակ Հովհաննիսյանը եւ վաղամեռիկ Ռուբիկ Եղոյանը: Արմավիրի ներկայիս մարզպետ Աշոտ Ղահրամանյանին, ով ոստիկանության Արաբկիրի բաժնի պետն էր, նախագահը զգուշացրել է, որ «տղաներին դաստիարակչական նպատակով» են կալանավորել, որ վերջինս նրանց մեկ գիշեր պատշաճ «հյուրընկալի», իսկ առավոտյան տուն ճանապարհի: Զգուշացումից քիչ հետո Ղահրամանյանը խորոված էր ուղարկել կալանավորված մարզպետին ու Ռուբիկ Եղոյանին:

Կարդացեք էջ**D**3:

### Զոհվել է մի զինվոր, եւս մեկը՝ վիրավորվել

Երեկ, ժամը 16-ի սահմաններում, ադրբեջանական զինուժի գնդակոծության հետեւանքով Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի Այգեձոր եւ Չինարի գյուղի սահմանագոտում զոհվել է ժամկետային ծառայության մի զինվոր, եւս մի զինվոր ոտքից վիրավորվել է: Այդ մասին տեղեկացանք Այգեձոր գյուղի բնակիչներից:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, «Հայացք» մամուլի ակումբի հյուրն է ՀԱԿ ներկայացուցիչ Արամ Մանուկյանը:

### Եղանակ

Երեւան + 7 + 23, Շիրակ - 1 + 17, Կոտայք - 1 + 17, Գեղարքունիք - 1 + 17, Լոռի + 3 + 19, Տավուշ + 7 + 21, Արագածոտն լեռներ - 1 + 17, Արագածոտն նախալեռն. + 5 + 22, Արարատ + 5 + 23, Արմավիր + 5 + 23, Վայոց Ձոր լեռներ - 1 + 17, Վայոց Ձոր նախալեռն. + 5 + 23, Սյունիքի հովիտներ + 9 + 19

## Դեմոկրատների կարծիքով՝ յուրաքանչյուր ձայնն «արժե» $3500

«Չեմ կարծում, որ ձեզ գոհացնում է հինգ տարին մեկ ջեմ ուտելը կամ տասը ձվով ձայն վաճառելը: Այդ փոքրիկ ընտրակաշառքների դիմաց դուք քաղաքական ուժերին վճարում եք շատ մեծ գին»,- այսօր ընտրողներին դիմելով՝ հայտարարեց Հայաստանի դեմոկրատական կուսակցության (ՀԴԿ) հանրապետական խորհրդի անդամ Արամ Գյուրջյանը: Դառնալով ժողովրդին կաշառող քաղաքական ուժերին՝ Ա. Գյուրջյանը վստահեցրեց, որ նրանցից հետո կգան ավելի հզոր ահաբեկիչներ եւ ավելի հարուստ կաշառողներ, եւ այդ դեպքում նրանք կմնան մենակ:

ՀԴԿ հանրապետական խորհրդի անդամ, քաղաքագետ Սուրեն Մովսիսյանն էլ նկատեց. «Հասարակության մեծամասնությունը պատրաստ է տասը ձվի եւ կոնֆետի համար իր ձայնը վաճառել: Այսպիսով դաստիարակում ենք դեգրադացված քաղաքացի»: Ա. Գյուրջյանը, մեկնաբանելով ներկայիս քաղաքական իրավիճակը, նկատեց, որ իշխանության մեջ են հայտնվել մի քանի հաջողակներ, որոնք շարժվում են ոհմակային՝ «ինչ կուզեմ՝ կանեմ» սկզբունքներով:

Aravot.am-ը բանախոսներից հետաքրքրվեց՝ իրենց իսկ նշած կաշառքով իր ձայնը վաճառող հասարակությունից ի՞նչ ակնկալիքներ ունեն եւ այդ պարագայում արդյոք կարո՞ղ են մուտք գործել խորհրդարան: Ա. Գյուրջյանը պատասխանեց. «Մեր մասնագետների հաշվարկներով՝ այս պահի դրությամբ կարող ենք ունենալ 6 տոկոս արդյունք: Կարծում եմ, որ մեր հասարակությունը փոփոխությունների պատրաստ հասարակություն է եւ նրա հետ պետք է աշխատել երկխոսության ճանապարհով: Մենք խորհրդարան չենք գնում աթոռներ զբաղեցնելու համար, այլ քաղաքացիների խնդիրները բարձրացնելու եւ դրանց լուծում տալու»: Ս. Մովսիսյանն էլ, դառնալով ընտրակաշառքների չափին, նկատեց. «Դիտարկելով երկրի բյուջեն՝ կարելի է տեսնել, որ յուրաքանչյուր քաղաքացու ձայնը արժե 3500 դոլար: Ուստի ինչո՞ւ են քաղաքացիներն իրենց ձայնն այդքան էժան վաճառում»:

Դեմոկրատները խոստանում են՝ խորհրդարան մտնելուց հետո առաջին քայլը լինելու է ստվերը, օլիգարխիան եւ մենաշնորհը վերացնելը:

ՏԱԹԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Հոգնած» քաղաքական դաշտ ու «հոգնած» քարոզարշավ

## Ըստ էության այսպես գնահատեց նախընտրական քարոզչության անցած տասն օրերը քաղտեխնոլոգ Կարեն Քոչարյանը:

Մայիսի 6-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների քարոզարշավը, որը փաստացի մեկնարկել էր ապրիլի 8-ից, երեկ թեւակոխեց իր տասնօրյակը: Ամփոփելով եւ գնահատելով անցած 10 օրերի քարոզարշավը՝ քաղաքական տեխնոլոգ Կարեն Քոչարյանն «Առավոտի» հետ զրույցում ասաց, թե գոնե առաջին 10 օրերի ընթացքում այն «շատ տխուր ու միապաղաղ» էր, որեւէ նորամուծություն, նոր տեխնոլոգիաների կիրառում այդ քարոզարշավում մեծ հաշվով, ըստ նրա, չկար: Քոչարյանի մատուցմամբ՝ հիմնականում իշխանական կուսակցությունները գերադասում են հասարակության հետ հանդիպումների ձեւաչափը, որովհետեւ նրանք խնդիր ունեն ցույց տալու, որ իրենք կարող են ընտրողների մեծ զանգված մոբիլիզացնել, այսպես ասած՝ շատ մարդ «հավաքել», որովհետեւ դա հետո նյութականացվելու է «ընտրությունների արդյունքում ստացված» տոկոսների տեսքով: Միեւնույն ժամանակ քաղտեխնոլոգն անհասկանալի համարեց ընդդիմադիր ուժերի ու իշխանական կուսակցություններից՝ ՕԵԿ-ի «բավականին պասիվ քարոզարշավը»: «Նրանք, իրոք, ձայներ հավաքելու եւ այդ ձայները «պահելու» խնդիր ունեն, ու ինձ համար նրանց պասիվությունը մնում է գաղտնիք: Ինձ համար ամենաանհասկանալի քարոզարշավը ՀՅԴ-ինն ու ՀԱԿ-ինն են: Չգիտեմ, գուցե նրանք տեխնոլոգիական պահած «զենքեր» ունեն, որ դեռ պիտի վերջում կրակեն, բայց միեւնույն է՝ ամենավատ քարոզարշավը նրանցն է: Եթե սպասելի էր, որ ԲՀԿ-ի քարոզարշավը կենցաղային պիտի լիներ, ՕԵԿ-ինը՝ այսպես ասած, «պուբլիչնի», ապա ՀՅԴ-ից եւ ՀԱԿ-ից ես այլ բան էի սպասում եւ այլ բան եմ տեսնում: ՀՅԴ-ն անում է այն, ինչ բոլորն անում էին դեռեւս 15 տարի առաջ՝ ստանդարտ բաներ, խորհրդային ագիտացիա-պրոպագանդա: Քաղաքական ուժերից ոչ մեկը, որպես այդպիսին, տեխնոլոգիական քարոզարշավ չի վարում, նորարարություններ չկան, որոնք գոնե մի քիչ մոտիկ լինեն 21-րդ դարում կիրառվող տեխնոլոգիաներին: Այդ ուժերը բոլորը մնացել են 20-րդ դարում: Իսկ ՀԱԿ-ի քարոզարշավն ինձ համար ընդհանրապես նոնսենս է»,- ասաց քաղտեխնոլոգը՝ դրական իմաստով առանձնացնելով մասնավորապես ՀՀԿ-ի ու «Ժառանգության» քարոզչական տեսահոլովակները: Համեմատելով ՀԱԿ-ի՝ 2007-2008թթ.-երին վարած քարոզչությունն ու այն, ինչ այդ ուժն անում է հիմա, ըստ Քոչարյանի՝ տպավորություն է թողնում, թե «ՀԱԿ-ում բոլորը հոգնել են, եւ հոգնել է առաջին հերթին Լեւոն Տեր-Պետրոսյանը», ու այնքան է հոգնել, որ ՀԱԿ-ականները նույնիսկ չեն էլ համաձայնեցնում իրենց քարոզարշավային ելույթներն ու ասելիքը եւ հակասում են իրար: Քոչարյանը նույնիսկ օրինակ բերեց՝ Մասիսի հանդիպումը, որտեղ մեկն ասում է՝ ՀԱԿ-ի հետ հանդիպումներին մարդիկ քիչ են գնում, որովհետեւ վախենում են, իսկ Տեր-Պետրոսյանն ասում էր՝ չէ, չեն վախենում: Կարեն Քոչարյանի կարծիքով՝ ընթացող քարոզարշավը տխուր է, որովհետեւ ընդհանրապես քաղաքական դաշտն է հոգնած: «Անգամ երկաթը, երբ շատ է աշխատում՝ հոգնում է: Նման արտահայտություն կա: Հիմա դա կարելի է ասել Հայաստանի քաղաքական դաշտի մասին»,- արձանագրեց քաղտեխնոլոգը:

Մեր այն հարցին, թե՝ հոգնած է, որովհետեւ ընտրություններին մասնակցողները տեսմիին չե՞ն դիմանում, թե՞ հասկանում են, որ Հայաստանում քարոզարշավով կամ ծրագրերով, PR-ով ու գովազդով չէ, որ հնարավոր է ընտրություններում հաղթել կամ որոշակի հաջողությունների հասնել: «Համաձայն չեմ ձեր դիտարկման հետ. գովազդով էլ է, PR-ով էլ է: Անկախ նրանից, թե մենք ինչ ենք ասում՝ ընտրակաշառք է բաժանվում, տոկոսներ են նկարելու եւ այլն, իսկ ես հիմա համոզված եմ, որ չեն նկարելու. Հրազդանի ընտրությունները ցույց տվեցին, ու ԱՄՆ դեսպան Հեֆերն էլ հետո ֆիքսեց, որ այդ տեսակի ընտրությունները «մաքուր» ընտրություններ են: Հիմա ընտրությունները եթե կեղծվում են՝ կեղծվում են ոչ թե նկարելով, բռի ուժով, քվեատուփ գողանալով, այլ՝ կամ քվեարկությունից երկու օր շուտ, կամ ընտրատեղամասից 200 մետր հեռու»,- ասաց Կարեն Քոչարյանը:

Կարեն Քոչարյանին հարցրինք նաեւ, թե՝ քարոզարշավի անցած 10 օրերի ընթացքը, ընտրություններին մասնակցող ուժերի հարաբերակցության եւ ԱԺ-ում հայտնվելու հնարավորությունների իմաստով, կանխատեսումները վերանայե՞լ է, որեւէ բան այս իմաստով փոխվե՞լ է: «Ոչ մի բան չեն փոխել: Ես կարծում եմ՝ փոխվեց միայն մի փոքր բան, որը ոչ ոք առանձնապես չի նկատում. ես կարծում եմ՝ փոխվել է ընդդիմության լիդերը: Քարոզարշավի 10 օրը ցույց է տալիս, որ այսօր «Ժառանգությունն» է ընդդիմության լիդերը, թեեւ մինչեւ ընտրարշավը բոլորը համոզված էին, որ ընդդիմության առաջնորդը ՀԱԿ-ն է, որը, սակայն, հիմա չունի այն ռեսուրսը եւ ոչ էլ էներգիան, որ ուներ 2007-2008թթ.-երին»,- կարծիք հայտնեց քաղտեխնոլոգ Կարեն Քոչարյանը: Նրա դիտարկմամբ՝ դա պայմանավորված է ոչ միայն ՀԱԿ-ի «հոգնածությամբ, այլեւ այդ ուժից իր պոտենցիալ ընտրողների հիասթափությամբ, որը պայմանավորված էր նաեւ իշխանությունների հետ նրա երկխոսությամբ», նաեւ «Ժառանգության» առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանի անձով, որը, քաղաքագետի բառապաշարով ասած՝ 22-25 տարվա «մաշվածություն» չունի, եւ նրա՝ որպես Արեւմուտքից եկած մարդու, վարած քարոզարշավն էլ ստանդարտ չէ: Քաղաքագետը նկատի ուներ քաղաքացիների հետ Րաֆֆի Հովհաննիսյանի շփման եղանակը, նրանց մոտենալու, ձեռքսեղմումի մշակույթը, որը, քաղաքագետի ասելով, շատ որոշակի եւ դրական ազդեցություն է թողնում: «2007-ին, երբ «Ժառանգությունը» մտավ խորհրդարան, բոլորը զարմացան՝ ինչի՞ հաշվին անցավ: Կարծում եմ՝ Րաֆֆիի «բարեւելու»,- պնդեց Քոչարյանը: Մեր դիտարկմանը, թե կարծիքներ էին հնչում նաեւ, թե՝ դա հնարավոր է եղել ոչ առանց իշխանությունների օգնության, քաղտեխնոլոգն այսպես արձագանքեց. «Կեղծիք բոլոր կուսակցություններն են անում: ՄԱԿ-ի նման կուսակցությունը, որը 2003-ին եւ 2007-ին էլ բիզնես պրոյեկտ էր իրականացնում, այնուամենայնիվ, այդ նույն բիզնեսի հաշվին չկարողացավ ԱԺ մտնել: Նույն Րաֆֆին ԱԺ մտավ բարեւելու հաշվին: Հիմա նրա ընտրազանգվածն ավելի է մեծացել, գրեթե կրկնապատկվել է այն սերնդի հաշվին, որը նախորդ ընտրություններում դեռ չափահաս չէր, եւ որը չի սիրում ոչ հանրահավաք, ոչ արյուն կամ խորհրդային քարոզչության ձեւերը»:

Արդեն որպես շարքային քաղաքացի եւ ոչ քաղտեխնոլոգ՝ Կարեն Քոչարյանն ասաց, թե իրեն ընդհանրապես ոչ միայն նախընտրական, այլեւ ընդհանուր քաղաքական մթնոլորտն ու քաղաքական դաշտի ավերված վիճակը չեն բավարարում: «Քաղաքական դաշտ չթողեցին, ավերեցին: 1990-ականներին պայքարը քաղաքական էր՝ ՀՀՇ, ՀՅԴ, ԱԻՄ, ԱԺՄ, ՍԻՄ, ՀՀԿ եւ այլն: 2000-ականներին քաղաքական դաշտը սկսեց ամբողջովին փոշիանալ: Այսօր Հայաստանում ռեալ եւ դասական իմաստով գործում է մի կուսակցություն՝ ՀՅԴ-ն, որն ապացուցել է, որ կարող է լինել եւ եղել է ընդդիմություն, հետո իշխանություն, հետո նորից ընդդիմություն եւ դրանից չի քանդվել ու լինելով իշխանություն՝ նաեւ նրա անդամների թիվը չի ավելացել: ՀՅԴ-ն ունի այն դասական կուսակցության՝ համաշխարհային քաղաքական այն բոլոր ատրիբուտները, որոնք պետք է ունենա կուսակցությունը: Մնացած բոլորը կամ իշխանության կուսակցություններ են, կամ մեկանգամյա պրոյեկտներ, գոնե այս պահին»,- հայտարարեց քաղտեխնոլոգ Կարեն Քոչարյանը:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ



# Տղամարդը չպետք է ընկնված տուն մտնի

## Երեկ Արթիկում հայտարարեց ԲՀԿ առաջնորդը

ԲՀԿ-ն երեկ քարոզարշավի էր եկել Շիրակի մարզի ամենաքաղաքականացված քաղաք՝ Արթիկ: Նա նախատեսված ժամից մի բան էլ շուտ էր սկսել իր ելույթը՝ ամենայն հավանականությամբ տեսնելով, որ հրապարակում ունկնդիրների պակաս չկա:

Գագիկ Ծառուկյանը այստեղ խոսեց պատգամավորի պարտականություններից՝ նշելով, որ խորհրդարան պետք է մտնի այն մարդը, ով կարող է ժողովրդի հոգսը, ծանրությունը տանել: «Ժողովուրդը պետք է իրեն գնահատված, պաշտպանված զգա, ժողովուրդը հույսով, հավատով կարող է սպասել 1 ամիս, 2 ամիս, 3 ամիս, բայց օր օրի տեսնելով, որ կա փոփոխություն, կա ուշադրություն, պրոբլեմները շատ են, բայց ամենակարեւորը իմացեք, այդ բոլորը լուծում ունեն: 20 հատ, թե 50 պրոբլեմ կա, բայց առաջնայինը մեր ժողովրդի զբաղվածության խնդիրն է, հնարավորություն, պայման, զբաղվածություն, մարդը պետք է զբաղվածություն ունենա,




որ կարողանա իր ընտանիքի հացը վաստակի, իր ընտանիքին կերակրի: Տղամարդը չպետք է ընկնված տուն մտնի, պետք է հպարտ մտնի, կնոջ ժպիտը երեսից չպիտի պակասի»,- հայ ընտանիքի երջանկության բանաձեւը ներկայացրեց պարոն Ծառուկյանը:

Նա նաեւ անդրադարձավ փոքր ու միջին բիզնեսին՝ շեշտելով, որ եթե մարդը օրական վաստակում է 5000-10 000 դրամ, նա պետք է ազատվի հիմնական բոլոր հարկերից: «Այսօր տաքսիստների, փոքր ու միջին բիզնեսի, ասենք թե վարսավիրանոցների համար հաստատագրված է, որը պարտադրում է երեք ամիսը միանգամից վճարել, ինչի՞ համար, մարդը թող մի ամիս աշխատի, ամսվա վերջին իր հարկերը կվճարի, կարող է մեքենան փչանում ա, կարող ա մի ամսից վարսավիրանոցը կամ կրպակը փակվում ա, ամիսը կաշխատի, իր համապատասխան գումարը կվճարի, բայց կանխավճարը 3 ամսվա արդեն դա պրոբլեմ ա, չէ՞, այս ծանր ֆինանսական ճգնաժամի ժամանակ»,- ասաց պարոն Ծառուկյանը:

Նա խոսեց նաեւ ավանդների վերադարձման խնդրից՝ շեշտելով, որ այն պետք է սկսել ամենածերերից ու անօգնական ընտանիքներից: Եվ երբ հերթը հասավ Արթիկում ԲՀԿ-ի կողմից առաջադրված մեծամասնական թեկնածուին՝ ԱԺ պատգամավոր Մուշեղ Պետրոսյանին ներկայացնելուն՝ արթիկցի մի ծերունի տեղից բացականչեց. «Ծառուկյան ջան, էնպիսի մարդ դրեք, որ կոճակ սեղմող չլինի, մենք արդեն հոգնել ենք»: Ի դեպ, այս ծերունին երկու օր առաջ ելույթ ունեցավ նաեւ ՀՅԴ-ի Արթիկ կատարած այցի ժամանակ՝ հայտարարելով, որ մեր երկրի փրկությունը մականունավորներից ազատվելու մեջ է: Ի պատասխան՝ Ծառուկյանը հակադարձեց. «Էդ կոճակ սեղմողներին էլ ձայնը դուք եք տալիս, ես ձեր հետ խոսում եմ որպես ձեզնից մեկը, սրան-նրան մեղադրել, ձեր ցավը տանեմ, չի կարելի»:

Ն. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Ա aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 19.04.2012

# 131 պատգամավորներից 80-ը միլիոնատեր են

## Ըստ առաջին նախագահի՝ յուրաքանչյուր ՀՀ քաղաքացու ձայնի քվեն ոչ թե 20 հազար դրամ է, այլ 10 հազար դոլար

«Ամեն ազգ արժանի է իր իշխանությանը»,- երեկ Արմավիրի մարզկենտրոն Արմավիր քաղաքում այս հին ու ըստ իրեն՝ դաժան իմաստնությունն իր ելույթում մեջբերեց ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ դիմեց հավաքվածներին. «Ո՞վ է այս իշխանությունը՝ Շմայսը, Նեմեցը, Լֆիկը, Սերժիկը, Սաշիկը, Մուկը... դուք արժանի՞ եք այդ իշխանություններին»: Հետեւեց հավաքվածների միահամուռ արձագանքը՝ «Ոչ»: Հավաքվածներից մեկն էլ վրա բերեց. «Բայց ո՞վ բերեց նրանց»: «2003-ին դուք բերեցիք, 1998-ին դուք ընտրեցիք: Ես եմ բերել Ռոբերտ Քոչարյանին ՀՀ վարչապետ: Ես նրան նախագահ չեմ բերել: Նախագահ այս շլյապավոր մարդն է նրան ընտրել»,- մատնացույց անելով հարցը հնչեցնողին՝ պատասխանեց ՀՀ առաջին նախագահը: Լեւոն Տեր-Պետրոսյանը մեկ անգամ եւս հայտարարեց, որ նա, ով ձայն կտա ՀՀԿ-ին ու ՕԵԿ-ին, կդառնա իշխանությունների հանցակիցը եւ այլեւս իրավունք չունի որեւէ մեկին մեղադրելու: Այս հայտարարությունն ընդունվեց ծափերով: «Սարդարապատում դուք կանգնեցրել եք թուրքին, դրանով փրկել եք այս երկիրը, եւ ստեղծվել է այս պետությունը»,- պատմական էքսկուրս կատարեց առաջին նախագահն ու նկատեց. «Եթե դա արել եք՝ սրանք ո՞վ են: Թուրքից ավելի՞ ուժեղ են, ավելի՞ խելոք են, ավելի՞ ճարտար են, ավելի՞ խորամանկ են: Ոչ: Անգրագետ, տգետ մարդիկ: Նայեք խորհրդարանի կազմը: 131-ի կեսը, ես վստահեցնում եմ ձեզ, դպրոցը չի ավարտել: Մյուս կեսի կեսը մի քանի տարի մնացել է նույն դասարանում: Հետո նրանք բարձրագույն կրթության դիպլոմներ են առել, գիտությունների թեկնածուի, դոկտորի կոչումներ են գնել, եւ այդ մարդիկ այսօր իշխում են ձեզ»: Առաջին նախագահը նաեւ նկատեց, որ 131 պատգամավորներից 76-ը գործարարներ են, ինչը ՀՀ Սահմանադրությամբ արգելված է, ու շարունակեց. «Միայն խորհրդարանում կա 80 միլիոնատեր: Դրամի միլիոնատեր չէ, դրամի միլիոնատերն ի՞նչ է: Դոլարով: Եվ մի քանի միլիարդատեր: Որտեղի՞ց նրանց այդ փողը: Ձեր գրպաններից: Ձեզ ընտրությունից ընտրություն 20 հազար դրամ են առաջարկում, 4-5 տարվա իշխանություն են ուզում, ամեն տարի յուրաքանչյուրիցդ գողանում են երկու հազար դոլար: 20 հազար դրամի դիմաց նրանք 10 հազար դոլար են գողանում ձեզանից յուրաքանչյուրից: Եթե գալիս են՝ 20 հազար դրամ են առաջարկում՝ պահանջեք 10 հազար դոլար. սա է ձեր ձայնի գինը, ձեր քվեի գինը: Եվ հիմա ի՞նչ. էլի պիտի լսենք, ասենք, ոգեւորվենք ու գնանք էլի ընտրակաշառքը վերցնենք ու էս գողերին, սրիկաների՞ն ձայն տանք»,- ասաց Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ հավելելով, որ մայիսի 6-ը մի նոր Սարդարապատ է՝ «կամ կանգնեցնում ենք թշնամուն, կամ վիզ ենք ծռում նրա առջեւ եւ կորցնում ենք մեր երկիրը»: «Պարտավոր ենք հաղթել»,- առաջին նախագահին ի պատասխան՝ ձայնեց հավաքվածներից մեկը: Տեր Պետրոսյանն էլ պատասխանեց. «Պարտավոր ենք, ուրեմն՝ հաղթենք: Հաղթելու մի ձեւ կա: ՀԱԿ-ն ապացուցել է, որ չորս տարի միակ ուժն է եղել, որ համարձակվել է բռնապետության դեմ դուրս գալ՝ չվախենալով ոչ գնդակոծություններից, ոչ էլ մարտերից: Մենք պաշտոններ ունեցել ենք: Ի՞նչ է, գալիս ենք դեպուտատ դառնալո՞ւ»:



Իսկ Էջմիածին քաղաքում ՀԱԿ-ի հետ հանդիպման եկածներին ՀՀՇ վարչության նախագահ Արամ Մանուկյանը ողջունեց՝ ասելով, որ անգամ վախի առկա մթնոլորտում համարձակվել են գալ՝ իբրեւ իրենց երկրի ապագայով իսկապես մտահոգ մարդիկ: Հիշեցնենք, որ Էջմիածնի քաղաքապետը ՀՀԿ համամասնական ցուցակում ընդգրկված գեներալ Մանվել Գրիգորյանի որդին է: Այս տարածքի բնակիչ է նաեւ ՀՀԿ-ի կողմից հովանավորվող եւ մեծամասնական ընտրակարգով առաջադրված գեներալ Սեյրան Սարոյանը: «1998-ից մինչեւ այսօր 1 մլն հայ լքել է իր հայրենիքը: Լքել է ոչ կամավոր, ժողովրդին դրել են այնպիսի պայմանների մեջ, աղքատացրել, խեղճացրել, խեղդել են մանր ու միջին բիզնեսը, գյուղացուն հողազուրկ են դարձրել, նրանց հողը, տունը գրավի տակ են դրել, նրան անճար թողել: Սա թուրքի գործ է»,- Էջմիածնում ասաց Լեւոն Տեր-Պետրոսյանը: Նա իր նախորդներին նաեւ մեղադրեց Ղարաբաղը դատարկելու մեջ. «Ղարաբաղի բնակչությունն այնքան է նվազել, որ ես կասկածում եմ, որ այդ բնակչությունն ի վիճակի կլինի պաշտպանել իր հողը»: Ապա նաեւ՝ բանակի թվաքանակը կրճատելու: Նրա խոսքերով՝ իր ղեկավարած իշխանության ժամանակ ազգային բանակը բաղկացած էր 78.000 զինվորից, իսկ հիմա բանակն ունի 50.000 զինվոր: Այս իրավիճակում, ըստ Լեւոն Տեր-Պետրոսյանի, ավելորդ է խոսել Ղարաբաղի եւ ոչ մի թիզ հող չզիջելու՝ իշխանությունների հայտարարությունների մասին: Հետո ՀԱԿ առաջնորդը նշեց, որ Հայաստանի պատմության մեջ սկսած 1921-ից՝ Մյասնիկյանի ղեկավարության տարիներից, ոչ մի իշխանություն իր ժողովրդին չի գնդակոծել, նրա վրա զենք չի բարձրացրել, մինչդեռ այս իշխանությունները 2008-ի մարտի 1-ին 10 մարդ սպանեցին: Ռոբերտ Քոչարյանին եւ Սերժ Սարգսյանին Լեւոն Տեր-Պետրոսյանը համեմատեց երիտթուրքերի եւ Ստալինի հետ, ովքեր նույնպես բռնի տեղահան էին անում հայերին:

Իրենց ելույթներում իշխանությանը սուր քննադատության ենթարկեցին նաեւ նախկին զինդատախազ Գագիկ Ջհանգիրյանը, ՀԺԿ առաջնորդ Ստեփան Դեմիրճյանը: Իշխանությունների վարած տնտեսական քաղաքականությունն արժանացավ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանի քննադատությանը: Իսկ Մեծամոր քաղաքում առաջին նախագահն ու նախկին վարչապետը խոսեցին նոր ատոմակայանի կառուցման անհրաժեշտության մասին: Առաջին նախագահը պատմեց, որ ժամանակին Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի հետ «լուրջ պայմանավորվածություններ» են եղել ՀՀ-ում նոր ատոմակայանի կառուցման շուրջ: Սակայն 1998-ի իր հրաժարականով այդ պայմանավորվածությունները անիրագործելի են մնացել: «Սրանք իրենց իշխանության գալու առաջին օրվանից սկսեցին խոսել, որ նոր ատոմակայան են կառուցելու: Սերժ Սարգսյանի նախորդ նախընտրական ծրագրում դա կար, դա ներկայացվում էր որպես մի հրաշք, ինչպես Մեղրիից Երեւան եկող երկաթուղին, չգիտեմ՝ Իրանի սահմանին մի հիդրոէլեկտրակայանի կառուցման ծրագիր եւ այլն: Այս հեքիաթներով կերակրեցին ժողովրդին 4-5 տարի, հիմա նորից հեքիաթներով ուզում են 4-5 տարի մնալ իշխանության: Կարո՞ղ եք ասել՝ ի՞նչ արեցին այդ միլիարդները: Շքեղ պալատներ կառուցեցին, ամենաթանկ մեքենաները գնեցին, ոսկե շղթաներ կախեցին թեւերին, վզերին եւ Ռոբերտ Քոչարյանի հանճարեղ գաղափարով սկսեցին հսկայական երկնաքերեր կառուցել Երեւանում: Դրանով հպարտանում էր, տալիս երկնիշ տնտեսական աճի ցուցանիշներ եւ այլն: Հիմա ի՞նչ եղան այդ երկնաքերերը: 100 հազարավոր քառակուսի մետր բնակելի տարածքներ այսօր դատարկ են: Միայն այդ շենքերի վրա ծախսված գումարը բավական էր, որ Հայաստանում 2 ատոմակայան կառուցվեր: Եթե այդքան փող ունեին, ուրիշ ներդնելու տեղ չկա՞ր»,- ասաց ՀՀ առաջին նախագահը՝ հավելելով, որ տարեկան մեկ միլիարդ դոլար է Հայաստանից արտահանվում: «Եկեք մեր ձեռքով մեր երկիրը չկորցնենք ու վերջապես թոթափենք այս խայտառակ լուծը: Կամ մայիսի 6-ին մենք սրանց վռնդում ենք այս երկրից, կամ դուք ձեր ձեռքով եք կորցնում էս երկիրը»,- եզրափակեց առաջին նախագահը: Լեւոն Տեր-Պետրոսյանը նաեւ կոչ էր անում ձայն տալ մեծամասնական ընտրակարգով ՀԱԿ-ի առաջադրած թեկնածուների օգտին:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Առաջին, երկրորդ եւ ներկայիս նախագահի տարբերությունները

## Ըստ ՀՀԿ պատգամավոր Կարինե Աճեմյանի

Երեկ ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը Էջմիածնում իշխանություններին համեմատել էր երիտթուրքերի հետ եւ նշել, որ ոչ մի տարբերություն չկա Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի միջեւ. «Ռեժիմն այն իշխանությունն է, որ ստեղծել է Ռոբերտ Քոչարյանը եւ կտակել Սերժ Սարգսյանին»:

Այս առնչությամբ Aravot.am-ը ՀՀԿ պատգամավոր Կարինե Աճեմյանից հետաքրքրվեց՝ Դուք երկրորդ եւ ներկայիս նախագահների միջեւ տարբերություններ տեսնո՞ւմ եք:

Նրա խոսքերով՝ «Աշխարհում երկու իրար նման մարդ չկա, ուր մնաց թե՝ նախագահները, դա նույն բանն է, որ իրեն էլ ինչ-որ մեկի հետ համեմատենք ու ասենք, թե շատ նման են: Հասկանալի է, որ նա արտաքինը նկատի չունի, բայց ընդհանուր առմամբ էլ նրանք նման չեն: Հակառակը՝ նրանք շատ տարբեր են, տարբեր են քաղաքական կուրսը, մոտեցումները: Մեր նախագահը նման չի որեւէ մեկին այն առումով, որ որեւէ մեկին երբեք չի փնովում, չի նեղացնում»:

Տիկին Աճեմյանը համաձայն չէ նաեւ Տեր-Պետրոսյանի այն դիտարկմանը, որ Քոչարյանի կտակն է այս ռեժիմը. «Այս տարիների ընթացքում փոխվել է ամեն ինչ՝ արտաքին աշխարհում մեր երկրի հարաբերությունները, քաղաքական կուրսը, հանդուրժողականությունը, որ կա այսօր»: Մենք փորձեցինք ճշտել՝ արտաքին հարաբերություններում փոփոխություն ասելով՝ նկատի ունեք ֆուտբոլային դիվանագիտությո՞ւնը, նա պատասխանեց. «Չէ, դա նկատի չունեի, ընդհանրապես մեր երկրի հեղինակությունը շատ բարձրացել է, եւ դա ոչ մեկը չի կարող ժխտել: Արտաքին քաղաքականության մեջ մեր կուրսը, կարծում եմ, շատ ավելի դինամիկ է: Ընդհանրապես զարգացումները, բարեփոխումները, կյանքը շատ փոխվել են, ուղղակի որոշ ուժեր չեն ուզում դա նկատել: Ես հիմա ամեն օր լինում եմ մարզերում քարոզարշավների, տեսնում եմ գյուղացիների վիճակը, հասկանում ենք: Մենք այն քաղաքական ուժն ենք, որը տեսնում է, թե ինչ բացթողումներ ունի, արձանագրում է եւ առաջիկա 5 տարիների ընթացքում պատրաստ է լուծել նաեւ այդ հարցերը»: Մեր հարցին՝ Սերժ Սարգսյանը եթե Ռոբերտ Քոչարյանից շատ տարբեր է, ապա Լեւոն Տեր-Պետրոսյանին նմա՞ն է՝ տիկին Աճեմյանը պատասխանեց. «Ես կարծում եմ, որ մեր 3 նախագահներն էլ խիստ տարբեր են թե՛ որպես մարդ տեսակով, թե՛ հայացքներով, տեսակետով, դիրքորոշմամբ»: Կարինե Աճեմյանը խուսափեց որպես մարդ որեւէ բնորոշում տալ 3 նախագահներին՝ ասելով, որ անգամ Լեւոն Տեր-Պետրոսյանի հասցեին չի կարող վատ բան ասել եւ նրան որակումներ տալ. «Լեւոն Տեր-Պետրոսյանի օրոք մենք անկախություն ենք ձեռք բերել, ինքը մեր առաջին նախագահն է եղել: Մենք բոլորս պետք է կարողանանք այդ քաղաքական մշակույթը ձեւավորել, որ մեր երեխաներն էլ այդպիսին լինեն: Չի կարելի անվերջ սեւացնել, փնովել: Բոլոր 3 նախագահների օրոք էլ թե՛ խնդիրների լուծումներ կային, թե՛ տարբեր մոտեցումներ»: Մեր դիտարկմանը, որ ՀՀՇ-ին եւ Տեր-Պետրոսյանին մազութի գող, լույսի գող որակումները տալիս ՀՀԿ-ականներն այդպիսի հանդուրժողականություն չէին դրսեւորում, ի՞նչն է փոխվել՝ Կարինե Աճեմյանը պատասխանեց. «Մենք քարոզարշավի ենք գնում եւ թույլ չենք տա մեզ որեւէ ուժի մասին որեւէ բան վատ ասել: Պարզապես ասելու ենք, թե ինչ ենք արել եւ ինչ ենք անելու»:



ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

## ՄԵԿ ԼՈՒՐ

### «Օրինաց երկիր»-ը Կապանում էր

«Օրինաց երկիր» կուսակցության ղեկավարն իր թիմակիցներով երեկ նախընտրական այցով Կապանում էր: Մշակույթի տան հրապարակում հավաքված բազմամարդ լսարանին ներկայացվեցին կուսակցության կողմից այս տարիներին բարձրացված հարցերը, կատարած գործունեությունը եւ նոր առաջարկությունների ծրագրային փաթեթը՝ կրթական, առողջապահական, սոցիալական եւ այլ ոլորտներին առնչվող:

«Մենք առաջարկում ենք, որ պայմանագրային զինծառայողների թիվը մեր երկրում ավելացնենք: Այսօր մեր երկրում կան տասնյակ հազարավոր 30-50 տարեկան առողջ երիտասարդ տղամարդիկ, ովքեր բան ու գործ չունեն, մենք առաջարկում ենք՝ մարդը գնա բանակ, ստանա փող, մի կողմից՝ ծառայի իր երկրին, մյուս կողմից՝ ծառայի իր ընտանիքին», իր ելույթում նշեց կուսակցության ղեկավար Արթուր Բաղդասարյանը:

ՕԵԿ-ի համամասնական ցուցակով առաջադրվել է նաեւ կապանցի թեկնածու, ՕԵԿ-ի Կապանի կառույցի ղեկավար Գարիկ Միրզոյանը, ում օգտին մարզկենտրոնի բնակիչներին կոչ արեցին քվեարկել:

Ս. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

# Մարալիկում մնացել են միայն «մեռելների վրա նվագողները»

## ՀՅԴ-ին կհաջողվի՞ փրկել կործանվող մարզերը

Երեկ Մարալիկի կենտրոնական հրապարակում Գագիկ Ծառուկյանին ունկնդրելու եկած բնակիչները մեզ դժգոհեցին, որ քաղաքը դատարկվում է, ինչ կա-չկա՝ ձեռքերից խլում են, իսկ կուսակցություններից եւ ոչ մեկը գործնական ոչինչ չի ձեռնարկում: «Այս քաղաքը ժամանակին 10 հազար բնակչություն ուներ, հիմա 5 հազար չկա, հավատացեք, մինչեւ ընտրության օրը մարդ չի մնա, որովհետեւ էսօր ելույթ լսողների մեծ մասը Ռուսաստանի տոմսերը ջեբերը դրած են եկել: Սա ապրելու տեղ չէ, ճամփեքով անցնել չի լինի, էնքան քարուքանդ են, որ գլուխդ կջարդվի, քաղաքը մի հիվանդանոց ուներ՝ փակեցին, դիահերձարանի եղածն ի՞նչ էր, անգամ դա տարան՝ Գյումրի հասցրին: Ամոթ է ասելը, մարդ մեռնի, մեռելդ շալակդ առած էդ «հրաշք» ճամփեքով Գյումրի պիտի հասնես: Քուր ջան, էս քաղաքում, եթե, իհարկե, կարելի է քաղաք կոչել, մնացել են միայն մեռելի վրա նվագողները, միայն նվագողներն են ներսից, սաղ ծառայությունները դրսից են»,- դժգոհում էին մարալիկցիները: Նրանց պնդմամբ՝ իրենց դիահերձարանը նորմալ վիճակում է, բայց այն կենտրոնացրել են Գյումրիում՝ փող աշխատելու համար: Նրանք նաեւ դժգոհում էին, որ Մարալիկից տարել են նոտարական գրասենյակն ու կադաստրը, բացի դատարանից ու ոստիկանության շենքերից՝ այս քաղաքում ոչինչ չի մնացել: «Մեզ ձեռ են առնում, ուրիշ ոչինչ, էս Ծառուկյանին էլ թվում է, թե մարալիկցիներն էնքան են հիացել ու հավատացել, որ եկել-կանգնել են: Եթե անասունին կեր տալու ժամ լիներ, ստեղ 2 հոգի էլ չէր հավաքվի, գյուղացի մարդ են, պարապ են, եկել են ելույթ լսեն»,- անկեղծանում էին մեր զրուցակիցները: Մարալիկցիները նաեւ դժգոհում էին իրենց «դեպուտատից», որի երեսը ընդհանրապես չեն տեսել: Նրանցից մեկը նույնիսկ առաջարկեց՝ եկեք գրազ գանք, թե Մխիթար Վարագյանին ճանաչող լինի, ես ձեր ուզած գումարը տամ: «Ես մի բան եմ հասկացել, որ էս թեկնածուները չեն ուզենա, որ ժողովուրդը հարստանա, եթե հարստանա, կանկախանա, ձեռքը չի տնկի ու իրենցից փող չի ուզի, իսկ սա իրենց հաստատ պետք չէ»,- դժգոհում էր նրանցից մեկը:



Մարալիկցիները պարապ էին, դրա համար էլ եկել էին լսելու, թե ով ինչ է ասում:

Նշենք, որ Մարալիկը, Ամասիայի ու Աշոցքի շրջանների գյուղերի համեմատ, իդեալական վիճակում է: Շիրակի մարզի սահմանամերձ այս շրջաններում այնքան մարդ չի մնացել, որ կուսակցությունները նույնիսկ հարկ չեն համարում գնալ քարոզարշավի. նրանք փաստացի անտեղի ժամանակ, միջոցներ են ծախսելու ու փոխարենը ոչ մի ընտրազանգված ձեռք չեն բերելու: Ի վերջո՝ ի՞նչ է լինելու մարզերի վիճակը:

Մարզերի համաչափ զարգացման համար մի քանի օրինագծեր մշակած դաշնակցական պատգամավոր Ռուզաննա Առաքելյանը երկու օր առաջ Արթիկի կենտրոնական հրապարակում խստորեն քննադատեց հայրենի իշխանությանը, որը 5 տարի խոսեց մարզերի համաչափ զարգացման մասին, բայց ամբողջ հարստությունն ու ներուժը դարձյալ Երեւանում կենտրոնացրեց՝ դատարկելով գյուղերը: Պատգամավորի ասելով՝ իրենց կուսակցությունը առաջարկել է մարզերում բարձրացնել աշխատողների աշխատավարձը՝ հավելավճարի ձեւով, մինչեւ 10 տոկոս, արտոնյալ վարկեր տրամադրել մարզերում բնակվող այն երիտասարդներին, որոնք ցանկություն ունեն զբաղվել մանր ու միջին բիզնեսով: «Դաշնակցության համար գերխնդիր է հայ մարդուն Հայաստանում պահելը: Եթե մեր գյուղերը մենք այսօր չկարողանանք բնակեցնել, չկարողանանք երիտասարդությանը գյուղում պահել, ապա դա նույնքան ազգային անվտանգության խնդիր է, որքան արտաքին քաղաքականության մեջ մեր մեծ հաջողությունները»,- ասաց պատգամավորը: Հանդիպումից հետո մենք տիկին Առաքելյանին հարցրինք՝ մի՞թե Դաշնակցությունից բացի, մարզերը փրկելու ուղղությամբ մյուս քաղաքական ուժերը մատները մատներին չեն խփել, այս թեման իրո՞ք հետաքրքիր չէ ոչ մեկին: «Չէ, մատները մատներին խփել են, բայց երբ որ մի սկզբունքային հարց ես դնում, եւ այդ սկզբունքային հարցը գործի իմաստով ակնհայտ չէ, արդեն մտածում ես, որ այդ մասին խոսվել է համակրանք շահելու համար: Բայց մարզերի համաչափ զարգացումը արտահայտվեց կոնկրետ օրինագծերով, ճիշտ է՝ ես եմ հեղինակել, բայց ի վերջո մեր խմբակցության վերլուծության արդյունքում է դա եղել: Ամենակարեւոր օրինագիծը, որ արդեն նախագահի վավերացմամբ գործելու է, լեռնային, բարձր լեռնային եւ սահմանամերձ հատվածում անվճար կրթության իրավունքն է: Այս պայմանով նրանք պարտավորված կլինեն վերադառնալ, աշխատել տվյալ գյուղում 5 տարի: Բայց որպեսզի թյուրիմացություն չլինի, պահանջարկ պիտի լինի մասնագիտության, անպես չէ, որ 5 տեղ ներկայացվի սոցիոլոգիայի, բայց այդ աղջիկը կամ տղան գյուղում աշխատանք չունենա»,- մանրամասնեց պատգամավորը: Ըստ նրա՝ իրենց ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարզերում հատկապես 3 մասնագիտությունների պահանջարկ կա՝ բժշկի, ուսուցչի, գյուղատնտեսի: «Որքան էլ աբսուրդ է, Երեւանում ամեն տարի գիտե՞ք, թե որքան ուսուցչի մասնագիտությամբ շրջանավարտներ ենք ունենում, բայց Հայաստանի Հանրապետությունում գյուղ կա, որ քիմիայի ուսուցիչը 3 առարկա է դասավանդում»,- ասում է պատգամավորը: Նրա ներկայացմամբ՝ ՀՅԴ-ն նաեւ առաջարկում է Շահութահարկի մասին օրենքի մեջ փոփոխություններ մտցնել, ըստ որի՝ նա, ով ցանկություն հայտնի սահմանամերձ ու բարձր լեռնային գյուղերում զբաղվել բիզնեսով, առաջին 10 տարում կազատվի հավելավճարից: «Գիտեք, ես չեմ թերագնահատում մյուսների գործը, բայց ես, որպես պատգամավոր եւ հայ մարդ, հավատում եմ գործին, խոսել բոլորս կարող ենք եւ շատ գեղեցիկ, նախընտրական ծրագրեր գրել, գալ ժողովրդին գեղեցիկ խոստումներ տալ, բայց ժողովրդին ինչպե՞ս պետք է հավատացնել՝ միայն գործով, հերիք է խաբեն, գործդ դիր իմ դիմաց եւ ասա՝ ինձ հավատա»,- ՀՅԴ-ին ակնարկեց Ռուզաննա Առաքելյանը:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

### «Արմենտելն» ընդլայնում է ֆիքսված հեռախոսների տեսականին

«Արմենտել» ընկերությունը հայտարարում է ֆիքսված հեռախոսների տեսականու ընդլայնման մասին: Ապրիլի 17-ից Beeline վաճառքի եւ սպասարկման բոլոր գրասենյակներում հաճախորդները կարող են ձեռք բերել ֆիքսված կապի նոր ռադիոհեռախոսներ՝ Panasonic KX-TG1100 եւ Panasonic KX-GT1611, 14700 դրամ եւ 15600 դրամ՝ համապատասխանաբար:

«Մշտապես ավելացնելով ծառայությունների եւ ապրանքների տեսականին՝ մեր ընկերությունը նպատակ է հետապնդում դարձնել իր հաճախորդների սպասարկումն առավելագույնս հարմարավետ եւ որակյալ: Այցելելով մեր վաճառքի եւ սպասարկման գրասենյակներ՝ Հայաստանի բնակիչները կարող են ձեռք բերել իրենց անհրաժեշտ սարքավորումները եւ միացնել կապի զանազան ծառայություններ ամբողջ ընտանիքի համար»,- նշեց «Արմենտել» ՓԲԸ գլխավոր տնօրեն Իգոր Կլիմկոն:

Նշենք, որ մինչ այդ հաճախորդներին հասանելի էին նաեւ ամրակցված հեռախոս Panasonic KXTS 500՝ 7000 դրամ արժողությամբ, եւ ռադիոհեռախոս Panasonic KXTG1311՝ 19500 դրամ արժողությամբ:

Երաշխիքային ժամկետը ֆիքսված կապի բոլոր հեռախոսների համար մեկ տարի է: Հավելյալ տեղեկություններ Beeline վաճառքի ու սպասարկման գրասենյակներում առկա սարքավորումների վերաբերյալ կարելի է ստանալ www.beeline.am կայքում:

# «Պոնչիկ-պերաշկիանոցը»՝ առնետների բո՞ւյն

## Սննդամթերքի անվտանգության ծառայությունը օբյեկտից դուրս առնետներով չի զբաղվում

Բաղրամյան 1 հասցեն, ինչպես բնակիչներն են վստահեցնում, դարձել է առնետների «բույն»: Այս հասցեում գործում է, ժողովրդի լեզվով ասած՝ «պոնչիկ-պերաշկիանոց», որից բուրող հոտն ու սննդամթերքի մնացորդներով լի աղբամանը առնետների համար «տնավորվելու» լավ միջավայր է: «Առավոտին» դիմած Բաղրամյան 1-3 եւ Մոսկովյան 20 շենքերի բնակիչները զարմացած են, որ ամբողջ մայրաքաղաքում ապամոնտաժվեցին գրեթե բոլոր կրպակները, իսկ կարկանդակի այս կրպակը մնաց անձեռնմխելի. «Քանդվեցին նույնիսկ կոշիկի վերանորոգման կրպակները, իսկ այս մեկը, որը սննդամթերքի մշակման ու վաճառքի համար ոչ նորմալ պայմաններում է աշխատում, մնաց որպես անառիկ բերդ: Ընդ որում, կրպակատերը նույնիսկ մի սեղան է տեղադրել այդ մասում, որը կենտրոնական փողոց է: Ամբողջ օրը տհաճ հոտ է տարածվում շրջապատով մեկ, կարծես թե ասիական շուկա լինի: Մայրաքաղաքի ամենագեղեցիկ խաչմերուկներից մեկը վերածվել է փողոցային առեւտրի կետի, որտեղ վխտում են առնետները»:

Սննդի օբյեկտները վերահսկում է գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը, որտեղից էլ փորձեցինք պարզաբանում ստանալ: Ծառայության պետի մամլո խոսնակ Բաբկեն Պիպոյանն «Առավոտին» հայտնեց, որ իրենք նման բողոք չեն ստացել, բայց նաեւ խոստացան, որ իրենց տեսուչը կայցելի տարածք եւ կուսումնասիրի. «Եթե հայտնաբերվի, որ սննդի օբյեկտում իսկապես առնետներ կան, ապա մենք լուրջ միջոցներ կձեռնարկենք»: Իսկ եթե պարզվի, որ առնետները օբյեկտում չեն, այլ հարակից տարածքում, ըստ պարոն Պիպոյանի, ապա դա արդեն ծառայության վերահսկողությունից դուրս է. «Այդ դեպքում մենք կդիմենք պետական համապատասխան մարմինների, որոնք էլ կզբաղվեն այդ խնդրով»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

# Նոր կոյուղատար՝ Երեւանի Խորենացի փողոցում

Երեւանի Կենտրոն վարչական շրջանում, Խորենացի եւ Քրիստափորի փողոցների հատման վայրում, «Երեւան Ջուր» ՓԲԸ «Արեւելք» շահագործման տնօրինության «Կենտրոն» տեղամասի աշխատակիցները ձեռնամուխ են եղել նոր կոյուղու կառուցմանը:

Ըստ տեղամասի գլխավոր ճարտարագետ Արթուր Ջակեույանի՝ շինարարությունը բացատրվում է երկու հանգամանքով: Առաջինը՝ կոյուղին այստեղ շահագործվում է երկար տարիներ եւ մասամբ խցանված է, ինչը հաճախակի վթարների պատճառ է հանդիսանում: Եվ երկրորդը՝ Երեւանի քաղաքապետարանը սկսել է փողոցի ասֆալտապատումը: Ակնհայտ է,



որ այս երկու աշխատանքների համատեղումը թույլ է տալիս հետագայում խուսափել փողոցի ծածկույթը վնասելուց:

Նոր պլաստմասսայե կոյուղագծի երկարությունը կազմում է 160 մետր, տրամագիծը՝ 500 մմ: Ճիշտ է, արդեն նախկին կոյուղու տրամագիծը 600 մմ էր, սակայն պլաստմասսայե խողովակը նորը լինելուց բացի, նաեւ երկարակյաց է, եւ Արթուր Ջակեույանի համոզմունքով՝ բնակիչների կողմից ճիշտ՝ ըստ նշանակության, շահագործվելու դեպքում հուսալիորեն կծառայի տասնամյակներ շարունակ:

Աշխատանքները փողոցում ընթանում են առաջընթաց տեմպերով՝ նպատակ ունենալով արդեն առաջիկա օրերին կոյուղին հանձնել շահագործման եւ «ճակատ» բացել ասֆալտապատողների համար:

«Երեւան Ջուր» ՓԲԸ հաղորդակցության բաժին

Առավոտ aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 19.04.2012

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ Հայաստանում սպասարկելու, իսկ մինչեւ տարեվերջ նաեւ թողարկելու է Diners Club միջազգային քարտեր

Երեկ ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ հերթական առաջանցիկ քայլը կատարեց՝ դեպի միջազգային շուկա՝ անակնկալ մատուցելով իր հաճախորդներին, հատկապես նրանց, ովքեր հաճախ են ճամփորդում կամ գործուղումների գնում: ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ ձեռք է բերել Հայաստանում Diners Club վճարահաշվարկային համակարգի քարտերի թողարկման եւ սպասարկման բացառիկ իրավունքը, եւ հաշվի առնելով, որ Diners Club-ը զուգահեռաբար մտել է նաեւ վրացական շուկա, ուստի Վրաստան հանգստի մեկնող մեր քաղաքացիներն այսուհետ հնարավորություն ունեն օգտվել այս ծառայությունից: Երեկ քարտի շնորհանդեսի ժամանակ ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ վարչության նախագահ Աշոտ Օսիպյանը նշեց, որ Diners Club-ի քարտերը ներդրվում են 2 փուլով: Առաջին փուլը համապատասխան միջավայրի ստեղծումն է, ինչն արդեն ավարտված է ու քարտով կարելի է կատարել վճարումներ: Երկրորդ փուլում ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ կթողարկի արդեն Diners Club Armenia քարտը, իսկ դա կլինի այս տարեվերջին: Ներկայումս ընթանում են քարտի դիզայնի աշխատանքները, ընդ որում՝ հաշվի է առնվում հայաստանյան շուկայի պահանջարկը եւ հաճախորդների հնարավորությունը: Նախատեսվում է 3 տարում թողարկված քարտերի քանակը հասցնել 20 հազարի:

Նշենք, որ ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ քարտային քաղաքականությունն այնպիսին է, որ ուղղված է բավարարելու հասարակության ամենատարբեր շերտերի պահանջմունքները՝ թողարկվում են ընտանեկան, կենսաթոշակային, ուսանողական, բիզնես քարտեր: ԱՐԱՐԱՏԲԱՆԿՆ այսօր ունի ավելի քան 90.000 գործող քարտեր: Աշխատավարձային ծրագրի շրջանակներում ներգրավված են ավելի քան 15000 կորպորատիվ հաճախորդներ: Հիշեցնենք, որ արդեն երկու տարի է՝ թողարկվել է «Կլասիկ M» մետրոքարտը, որից կարելի է օգտվել մետրոյի բոլոր կայարաններում, իսկ անցյալ տարի բանկը թողարկեց VISA ավտոքարտը, ինչը հնարավորություն է տալիս վճարումներ իրականացնել 28 բենզալցակայաններում: Աշոտ Օսիպյանի խոսքերով՝ «Բանկն արձանագրել է հաճախորդների թվի 50 տոկոս աճ, ինչով էլ պայմանավորված է քարտային շուկայում բանկի կողմից պարբերաբար իրականացվող նորարարությունները»: Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում ընդլայնելով բանկոմատների եւ POS տերմինալների ցանցը, բանկն իր հաճախորդների համար հնարավորություն է ստեղծել օգտվել ավելի քան 64 բանկոմատներից եւ 352 POS տերմինալներից:

Ինչ վերաբերում է Diners Club-ին, այն 4 խոշոր վճարահաշվարկային կազմակերպություններից միակն էր, որ Հայաստանում դեռ ներկայացված չէր, ուստի ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ լրացրեց այդ բացթողումը: Diners Club-ն աշխարհում առաջինն է ստեղծել պլաստիկ քարտեր, ներկայացված է 185 երկրներում, սպասարկվում է 800 հազ. բանկոմատների կողմից՝ 60 արժույթներով:

Քարտի շնորհանդեսին ներկա հյուրերը կարեւորեցին Բանկի այս քայլը, նաեւ միջազգային ֆինանսական շուկայում մեր երկրի հեղինակության բարձրացմանը նպաստելու տեսանկյունից:

Իսկ ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի անդամ Վախթանգ Աբրահամյանի դիտարկմամբ՝ համաշխարհային հայտնի բրենդի մուտքը կնպաստի մեր շուկայում մրցակցության խորացմանը:

R

## Պարզաբանման պարզաբանում

ՀՀ ոստիկանությունը ընտրությունների հետ կապված ոստիկանության պարզաբանումների վերաբերյալ երեկ հանդես է եկել պարզաբանմամբ՝ տարաբնույթ մեկնաբանությունները բացառելու համար:

«Ոստիկանության կողմից հայտարարվել է ոչ թե անձանց անձնագիր ունենալու հանգամանքը, այլ միեւնույն անհատական տվյալներ ունեցողների (անուն, ազգանուն, հայրանուն) ինքնության տարբեր լինելը: Ընտրողների ռեգիստրը ձեւավորվում է բացառապես օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բնակչության պետական ռեգիստրի տվյալների հիման վրա: Ընտրացուցակները կազմելիս՝ քաղաքացու հաշվառման հասցեում բնակվելու կամ բնակության վայրը փոխելու հանգամանքները պարզելու պարտականություն ոստիկանությունը չունի: «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռեգիստրում ընդգրկվելու համար Հայաստանի Հանրապետության բնակիչը պարտավոր է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում համապատասխան տեղական ռեգիստրին տրամադրել իր մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն: ՀՀ կառավարության 2005թ. հուլիսի 14-ի թիվ 1231-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի համաձայն՝ մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս՝ քաղաքացին դիմում է նոր բնակության վայրի տեղական ռեգիստրին՝ նոր բնակության վայրում հաշվառվելու համար: Եթե մշտական բնակության վայրը փոխած ՀՀ քաղաքացիները չեն կատարում օրենքով իրենց վրա դրված պարտականությունը, ապա կրում են ոչ իրավաչափ անգործության հետեւանքով անբարենպաստ հետեւանքների առաջացման պարտականությունը»:

Զանգվածային լրատվության միջոցներում առաջ քաշված հարցադրումների կապակցությամբ ոստիկանությունը հայտնում է, որ կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Վերին Շենգավիթ 6 փ. 2, Նորագավիթ 1 փ. 126, Բագրատունյաց 2 նրբ. 2, Չեխովի փող. 15 Նկուղ, Սարի թաղ 19 փ. 10, Դիմիտրովի փ. 3, Գլինկայի 1 Նրբ 1, Երկաթուղայինների 7 փ. 8, Նոր Արեշ 14 փ. 61 հասցեները (դրանցից յուրաքանչյուրը) ընդգրկում են տարբեր ընտանիքներին պատկանող բազմաթիվ չհասցեավորված բնակելի տներ, որոնց բնակիչները բնակելի տարածությունների հասցեների բացակայության պատճառով հաշվառված են վերոնշյալ հասցեներում:

## Պատռել են ԱԺ պատգամավորության թեկնածու, փաստաբան Էդմոն Մարուքյանի նախընտրական պաստառը

Թիվ 30 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով ինքնառաջադրված, ՀՀ ԱԺ պատգամավորության թեկնածու Էդմոն Մարուքյանը ընտրախախտման վերաբերյալ հաղորդում է ներկայացրել ոստիկանության Վանաձորի բաժին: Նա ասում է, որ իր նախընտրական պաստառը Վանաձոր քաղաքի Գրիգոր Լուսավորչի փողոցի թիվ 29 շենքի հարավային պատի արեւմտյան մասից պոկվել եւ պատռվել է: «Ամսի 14-ին փակցրել ենք, 16-ին արդեն գտանք պատառոտված, պոկված վիճակում»,- ասում է պատգամավորության թեկնածուն.



Վանաձորի քաղաքապետի որոշմամբ՝ այդ հատվածում եւս ԱԺ պատգամավորության թեկնածուն իրավունք ունի անվճար նախընտրական պաստառ փակցնելու: «ՀՀ Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ արգելվում է պաստառները պոկելը, պատռելը, դրանց վրա գրառումներ կատարելը կամ ցանկացած այլ եղանակով վնասելը»,- նշում է Էդմոն Մարուքյանը: Նա բացատրում է, որ համաձայն ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 4012 րդ հոդվածի՝ վերոնշյալ գործողությունների համար նախատեսվում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով:

Պատգամավորության թեկնածուն պահանջում է օրենքով սահմանված կարգով ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ նշված զանցանքը գործող անձանց հայտնաբերելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու համար:

ԱՆՈՒՇ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ
Վանաձոր

## Զինվորական հագուստ կրել չէր կարող

13 օր է, ինչ հացադուլ է հայտարարել արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկում Կոտայքի մարզից զորակոչված Սուրեն Կիրակոսյանը: Նա 2009թ. զորակոչվել է բանակ, բայց այդ ժամանակվանից ունեցել է առողջության հետ կապված լուրջ խնդիրներ: Հացադուլավորը պահանջում է հանդիպում պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հետ, իրեն կրկին հետազոտել եւ ազատել կալանքից:

Զինծառայության առաջին իսկ օրվանից նրա առողջությունը տեղի է տվել, իսկ շարքայինի բողոքները բուժում ստանալու՝ մնացել են անհետեւանք: «Ձախ ուսագոտու եւ կրծքավանդակի առաջնային մակերեսի ձախ կեսի պիգմենտային ի ծնե խալեր» ախտորոշմամբ զինվորը ճանաչվել է ոչ պիտանի շարային ծառայության համար, սակայն զինգրքույկում արձանագրվել է՝ «պիտանի է շարային ծառայության համար», եւ զորամասում լիարժեք ծառայություն է անցկացրել, ինչը նպաստել է հիվանդության բարդացմանը: Զինվորական հագուստն ու զենքը նպաստել եւ վնասել են զինծառայողի ուսի վրա առկա խալի մեծացմանը ու սիմետրիկության խախտմանը, նաեւ մազ է աճել, ինչը խիստ վտանգավոր է կյանքի համար:

Զինծառայողին սպառնում էր վիրահատությունը, եւ նա մինչ վիրահատությունը՝ ներկայացվել է Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի նիստին: Ըստ նոր ախտորոշման՝ նրա մոտ առկա էին «Ձախ ուսի եւ կրծքավանդակի շրջանում պիգմենտային խալեր՝ զինվորական համազգեստը եւ զենքը կրելուն աննշան խանգարող»:

Զինվորը տեսնելով, որ իր բողոքները մնում են առանց պատասխանի, արձակուրդից հետո այլեւս չի վերադարձել զորամաս:

5 ամիս հետո՝ 2011թ. մայիսի 22-ին նրան կալանավորել են: Հարուցվել է քրեական գործ՝ Քրօրի 361-ի 4-րդ մասով (զորամասը ինքնակամ լքելը):

Ռ. Մ.

## Սիմոնյանը հիվանդ է

«Կոշ» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Արամ Սիմոնյանը շուրջ 10 օր առաջ տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ: Ըստ արդարադատության նախարարության, մարտի 28-ին «Կոշ» քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող Արամ Սիմոնյանը հիմնարկի բժշկին բողոքել էր որովայնի շրջանում սուր ցավերից եւ նույն օրն էլ տեղափոխվել էր «Դատապարտյալների հիվանդանոց»: Կատարված գործիքային եւ լաբորատոր քննությունների արդյունքում պարզվել է, որ Ա. Սիմոնյանի մոտ առկա է «կալկուլյոզ խոլեցիստիտ» (լեղապարկի քարեր՝ 22 եւ 14 միլիմետր տրամագծով): Իսկ հիմնարկի ատամնաբուժական բաժանմունքում հետազոտման ժամանակ Ա. Սիմոնյանի մոտ հայտնաբերվել են ատամնաշարի հետ կապված մի շարք հիվանդություններ՝ թարախային գոյացություններ:

# «Փսիխոզային» քաշքշուկներ

## Սուրեն Շահվերդյանին անընդհատ խանգարում են

Բեմադրիչ Սուրեն Շահվերդյանը (լուսանկարում) 2008-ի դեկտեմբերից այլեւս չի աշխատում Գ. Սունդուկյանի անվան թատրոնում: Նա ժամանակին իր ներկայացումներով տարբերաբար մասնակցել է հեղինակավոր միջազգային թատերական փառատոների: Այժմ էլ հրավերներ է ստանում արտերկրում ներկայացումներ անելու: «Առավոտի» հետ զրույցում բեմադրիչն ասաց, որ մի քանի օրից կմեկնի Գերմանիա՝ որոշ ստեղծագործական ծրագրեր այնտեղ իրացնելու: Հունվարի 20-ին Սուրեն Շահվերդյանը Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի ղեկավարությանը 2 նամակ էր ուղարկել, ասում է՝ մինչ օրս կոնկրետ պատասխան չի ստացել: Նամակներից մեկով Սուրենը թատրոնի ղեկավարությանը խնդրել է վերականգնել ըստ Սառա Քեյնի՝ իր բեմադրած «Փսիխոզ 4.48» ներկայացումը: «Այն չէր խաղացվում, որովհետեւ հեղինակային իրավունքների համար 2 տարի չէր վճարվել բավականին «մեծ»՝ մոտ 200 եվրո, թատրոնը եւ մշակույթի նախարարությունը չէին վճարել: Մի քանի նամակներից հետո ես պայմանավորվածություն ձեռք






բերեցի 2 տարի խաղալ այդ ներկայացումը անսահմանափակ թվով, վճարելով ընդամենը 80 եվրո: Ասացի՝ ինքս կվճարեմ, նամակն ես եւ թատրոնի երիտասարդները ցանկանում էինք, որ այն անպայման վերականգնվեր: Հունվարի 28-ին թատրոնից նամակ եկավ, թե իմ հարցադրումը շուտափույթ կքննարկվի մոտակա գեղխորհրդում: Ու էդ շուտափույթը մինչեւ հիմա չի եղել»,- պատմեց Սուրենը: Նա հավելեց, որ այդ ընթացքում Պրահայի Apostrof փառատոնից իրեն խնդրել են որեւէ գործ ներկայացնել, ինքն էլ նկատի է ունեցել «Փսիխոզը»: Բայց քանի որ այն Սունդուկյան թատրոնի ներկայացումն էր, փառատոնի կազմակերպիչներից խնդրել է մինչեւ ապրիլի 10-ը իրեն ժամանակ տալ: «Ապրիլի 10-ին ոչ մի պատասխան չունեի թատրոնից, մի քանի անգամ բանավոր ասել էին, թե դեռ գեղխորհուրդ չի եղել, չենք կարող պատասխանել: Իսկ իմ պնդումներին՝ ի՞նչ կապ ունի գեղխորհուրդը դրա հետ, երբ «Փսիխոզ 4.48»-ը խաղացանկային ներկայացում էր, մասնակցել է բազում փառատոների, բարձրացրել Սունդուկյանի դրոշը, հաղթանակներով վերադարձել, գլխավոր ռեժիսոր Տիգրան Գասպարյանը պատասխանել էր, որ այլեւս բոլոր հարցերը քննարկում է միայն գեղխորհուրդը: Հիմա ապրիլի 18-ն է, էլի սպասում եմ էդ նամակի պատասխանին»,- երեկ հեռախոսով ասաց Սուրեն Շահվերդյանը: Մայր թատրոնի ղեկավարությանն ուղարկած հաջորդ նամակում էլ բեմադրիչը խնդրել է հնարավորություն ընձեռել ինքնուրույն բեմադրություն անել մեծ բեմում (Շեքսպիրի «Օթելլոն»), իսկ թատրոնի ձմեռային այգում բեմադրել Թենեսի Ուիլյամսի «Ապակե գազանանոցը»: Սուրեն Շահվերդյանն ասում է, որ այդ «մասով» էլ դեռ պատասխան չի ստացել, իսկ Պրահայի փառատոնին, հասկանալի պատճառներով, չի մասնակցել:

Գ. Սունդուկյան թատրոնի տնօրեն Ստեփան Դավթյանն «Առավոտի» հետ զրույցում հայտնեց, որ Սուրենի նամակներին իրենք պատասխանել են, նոր ներկայացումներին վերաբերող հարցն էլ գեղխորհուրդը պետք է քննարկի, ինչ վերաբերում է «Փսիխոզ 4.48»-ին, տնօրենի խոսքով. «Այն իրեն չի արդարացրել, դրա համար էլ հանվել է խաղացանկից»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# Տպագրական բարձր որակ եւ վատ նկարազարդումներ

## Գրքերի դիզայնով զբաղվող նկարչի դիտարկումները

Վերջին շրջանում ակնհայտ է հայաստանյան որոշ հրատարակչությունների կողմից տպագրված գրքերի բարձր որակը: Սակայն նկարիչների շրջանում խոսվում է դրանցում հաճախ հանդիպող ցածրարվեստ նկարազարդումների մասին: Մասնագետները պնդում են, որ թանկարժեք գրքերի դիզայնը չի համապատասխանում դրանց բովանդակությանը, փաստում, որ որոշ դասագրքերի իլյուստրացիաներ արտատպված են դրսի հրատարակություններից:

«Առավոտը» այս թեմայով զրուցեց նկարիչ, արվեստագիտության թեկնածու, Երեւանի գեղարվեստի ակադեմիայի դոցենտ Վահե Գասպարյանի հետ: Նրա՝ Ի. Ջիեռնիի «Գունավոր հեքիաթները», Հ. Կորտամալիի «Պատմվածքները» եւ այլ գրքերի համար արված դիզայնը քանիցս ճանաչվել է լավագույնը ոչ միայն հանրապետական, այլեւ միջազգային մրցանակաբաշխություններում, իսկ 2011-ին նկարչի աշխատանքներով լույս տեսած՝ Ֆլորա Գրիգորյանի «Հայկական ազգային տարազ» եռալեզու ալբոմը մեծ պահանջարկ ունի նաեւ արտերկրում: Վահե Գասպարյանը ունեցել է ցուցահանդեսներ Հայաստանում, Ֆրանսիայում, Իտալիայում, ԱՄՆ-ում, Ռուսաստանում եւ այլուր:

Մեզ հետ զրույցում արվեստագետն ասաց, որ համակարծիք է իր կոլեգաների դժգոհությանը՝ մեզանում հրատարակվող գրքերի դիզայնի առումով: Նշեց, որ գրքի դիզայնը կամ նկարազարդումը առանձին մասնագիտություն է եւ Գեղարվեստի ակադեմիայում 3-րդ կուրսից գրաֆիկայի բաժնի ուսանողները ընտրում են կամ հաստոցային գրաֆիկան, կամ գրքի ձեւավորում մասնագիտությունը: «Նախկինում ուսանողները պրակտիկա էին անցնում տպարաններում, մի բան, որը մերօրյա ուսումնական ծրագրերից բացակայում է: Ստեղծվել էր կապ հրատարակչի եւ ապագա դիզայների միջեւ, նույնիսկ ուսանողները պատվերներ էին ստանում: Այժմ գրեթե խզվել է հրատարակիչ-Գեղարվեստի ակադեմիա կապը: Այսօր որոշ դասախոսներ սեփական նախաձեռնությամբ ուսանողների հետ այցելում են տպարաններ՝ այդպես լրացնելով բացը: Կարծում եմ, որ այս խնդրին շուտափույթ պետք է անդրադառնա համապատասխան գերատեսչությունը՝ տպարաններում անցկացվող պրակտիկան ներառելով ուսումնական ծրագրում»,- ասաց Վ. Գասպարյանը:



Մեր զրուցակիցը նշելով, որ մեզանում կան բարձրարվեստ մասնագետներ, հայտնեց, որ նրանցից շատերը չեն մասնակցում գրքերի ձեւավորման աշխատանքներին՝ չնչին վարձատրության պատճառով: «Մյուս կողմից էլ՝ հրատարակիչները, ելնելով գրքերի վաճառքից ստացված եկամուտներից, հնարավորություն չեն ունենում պատշաճ վարձատրել նկարչին, հետեւաբար ավելի քիչ միջոցներ հատկացնելով գրքերի նկարազարդումներին, բնականաբար, հրավիրում են ոչ բարձրակարգ մասնագետների»,- փաստեց արվեստագետը: Վահե Գասպարյանի հավաստմամբ՝ մեր մանկական գրքերի մեծ մասը «ագրեսիայի» է ենթարկվում օտար հեղինակների դրսից բերված ակնահաճո, ճաշակով, գրագետ ու բարձրարվեստ նկարազարդ գրքերի կողմից:

Անդրադարձ եղավ նաեւ դպրոցական դասագրքերի իլյուստրացիաներին. «Շատերում առկա նկարները երեխաների մոտ ոչ միայն հեռու են ճաշակ ձեւավորելուց, այլեւ պարզապես արտատպված են արտերկրում հրատարակված գրքերից»:

Վահե Գասպարյանին հուզում է նաեւ հայրենական մուլտֆիլմերի հերոսների արտաքինը. «Որոշ անիմացիոն ֆիլմերում նույնիսկ ծնողն է դժվարանում ճանաչել, թե ինչ կենդանիներ են, այնքան են դրանք աղավաղված: Մինչդեռ մուլտֆիլմերի հերոսները նաեւ իրենց արտաքինով պետք է բարի ու լուսավոր հետք թողնեն երեխայի վրա»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

# «Մեկ էլ տեսար՝ գրպանս նարկոտիկ գցեցին»

## Հեգնում է Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի նախկին ռեկտոր Սուրեն Զոլյանը

«Մեր համալսարանի պատիվն արատավորվում է ոլորտի պատասխանատուների կողմից. վերջին պատկերն այն հրամանն է, որով իբր թե ես ազատված եմ աշխատանքից: Բայց ես ընտրվել եմ որպես ռեկտոր խորհրդի ընտրությունների արդյունքում, հաստատվել կառավարության կողմից եւ այդ որոշման հիման վրա կառավարությունը հանձնարարել է այն ժամանակվա նախարար Լեւոն Մկրտչյանին կնքել ինձ հետ պայմանագիր. լավն եմ ես, թե վատը՝ համենայնդեպս այդ կարգը պիտի պահպանվեր, ոչ թե նախարարը որոշեր»,- լրագրողների հետ երեկվա հանդիպման ժամանակ հայտարարեց Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի, իր խոսքով ասած՝ անօրինական կերպով հեռացված ռեկտոր Սուրեն Զոլյանը:

Նա այս «խառը պատմությունը» չի անձնավորում, չի քաղաքականացնում, բայց, ըստ նրա, այդպիսի միտումներ, բնականաբար, կան: Նախկին ռեկտորը նշում է, որ միշտ աշխատել է օրենքով, իսկ իր հեռացման հարցը վիճարկելու է դատարանով:

Սուրեն Զոլյանը բացառեց բուհում արտաբյուջետային խնդիրների հետ կապված հարցերը, ինչը եւս հետեւանք կարող էր լինել իր հեռացման համար:

Իսկ թե ինչ է պատրաստվում անել հեռացված ռեկտորը մինչ դատարանում հարցը վիճարկելը՝ ասաց. «Ենթադրում եմ, որ որեւէ թուղթ ստորագրեմ՝ նախարարը կարող է անգամ սպեցնազ ուղարկել իմ ետեւից, այդ պատճառով էլ զգուշանում եմ, այսինքն՝ կատարում Աշոտյանի հրամանը: Իսկ այժմ նամակ եմ գրում վարչապետ Տիգրան Սարգսյանին, որպեսզի իբրեւ վերադաս կասեցնի այս ակտը: Նշեմ, որ ես օրենքով պարտավոր եմ չկատարել հակաօրինական որոշումները, եւ չեմ կարող ենթարկվել պատասխանատվության դրա համար, բայց պետք է զգույշ լինել, ամեն ինչ սպասելի է, մեկ էլ տեսար՝ վաղն էլ գրպանս նարկոտիկ գցեցին»:

Հարցին՝ ճի՞շտ են արդյոք այն լուրերը, թե ՀՀ երկրորդ նախագահի մամուլի խոսնակ Վիկտոր Սողոմոնյանն է իր թիկունքին կանգնած, նախկին ռեկտորը մեկնաբանեց. «Վիկտոր Սողոմոնյանն իմ լավագույն ուսանողներից է եղել, աշխատել է երկրորդ նախագահի մամլո խոսնակ, միաժամանակ մեր բուհի խորհրդի նախկին նախագահն էր, բայց այն, որ նա է այժմ իմ թիկունքին, այդպես չէ: Նախ ես շնորհակալ եմ նրան համագործակցության համար, մենք շատ լավ ենք աշխատել: Երկրորդ՝ ներողություն, բայց ես իմ կենսագրությունն ունեմ, եւ այդ լուրը թե իմ, թե նրա համար ծիծաղելի է, գոնե ասեիք՝ Օբաման է թիկունքիս»:

Լեզվաբանական համալսարանի ռեկտորը մտահոգված է մեկ այլ հարցով եւս: Ըստ նրա՝ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը իր գործելաոճով վնասում է Հանրապետական կուսակցությանը. «Ի դեպ՝ որպեսզի վնաս չհասցվի կուսակցությանը, որը ներկայացնում է Աշոտյանը, առաջարկել եմ այս որոշումը կասեցնել մինչեւ ընտրությունների ավարտը: Թե ի՞նչ է պատահել, այս ի՞նչ շտապողականություն է՝ չեմ հասկանում: Այստեղ միտում կա: Ինքն աշխատում է իր կուսակցության դեմ: Ստացվում է, որ Աշոտյանը այնքան էլ վստահ չէ իր վրա, որ հետո էլի նախարար է աշխատելու, նա չի ընդունել իմ առաջարկը: Ինչպես ինքն է իմ մասին ասել՝ իրավական առումով ապիկար, դա մենք դատարանում կպարզենք, թե ով է իրական իրավական առումով ապիկարը: Իսկ Հանրապետական կուսակցությունը արդեն ձայներ է կորցրել Աշոտյանի շնորհիվ: Նախարարը նույնիսկ մեր ուսանողներին է տրամադրել իր դեմ»:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Ա aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 19.04.2012

VivAcell MTS

# ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## ԱԻԲԱ-ն շարունակում է մաղել «ոչ յուրայիններին»

Տրապիզոնում ընթացող բռնցքամարտի եվրոպական երկրների համար օլիմպիական միակ վարկանիշային մրցաշարում ԱԻԲԱ-ն շարունակում է «ոչ յուրայիններին» մաղելու ավանդական քաղաքականությունը:

Դա հերթական անգամ ցայտուն կերպով արտահայտվեց երեկ կայացած մինչեւ 60 կգ քաշային կարգում Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր, գյումրեցի Վլադիմիր Սարուխանյանի եւ շոտլանդացի Ջոշ Թեյլորի մենամարտում:

ՀԱՕԿ-ի լրատվության բաժինը ներկայացրել է այդ դիմակայության ամբողջական պատկերը՝ մրցավայրից մեր հավաքականի երկրորդ մարզիչ Ֆեդյա Ալեքսանյանի պատմածով: «Ամբողջ դահլիճը վանկարկում էր Թեյլոր-Թեյլոր, որին ի պատասխան՝ Վլադիմիրը ռինգում սկսեց իր գործն անել: Նա երեք ռաունդներում անընդհատ հետապնդում էր փախչող շոտլանդացուն՝ դիպուկ հարվածներ հասցնելով: Սակայն կողային մրցավարները ռինգում տեղի ունեցողը «չնկատելով»՝ ամեն անգամ մեկ-երկու միավոր գրանցում էին շոտլանդացու օգտին»,- մարտից անմիջապես հետո Տրապիզոնից հեռախոսով ՀԱՕԿ-ի լրատվական բաժնին պատմել է Ֆեդյա Ալեքսանյանը՝ նշելով, որ այդ պահին մեր պատվիրակության ղեկավար, եվրոպական կոնֆեդերացիայի գործկոմի անդամ, Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայի 1-ին փոխնախագահ, ՀԱՕԿ-ի փոխնախագահ Դերենիկ Գաբրիելյանն ու հավաքականի գլխավոր մարզիչ Կարեն Աղամալյանը բողոքարկել են մենամարտի արդյունքը եւ այդ պահին գլխավոր մրցավարի մոտ քննարկում են խնդիրը:

## Աշխարհը տեսավ օլիմպիական ջահը



Ամառային 30-րդ օլիմպիական խաղերի մեկնարկից 100 օր առաջ հայտնի դարձավ, թե ինչ տեսք ունի Լոնդոն 2012-ի ջահը: Օլիմպիական խաղերի պաշտոնական կայքից տեղեկանում ենք, որ դիզայնը մշակել են Լոնդոնի բնակիչներ Էդվարդ Բերբերը եւ Ջեյ Օսգերբին:

Ջահը պատրաստված է ալյումինի տարբեր ձուլվածքներից: Նյութն ընտրվել է ամրության ու թեթեւության համար: Ջահն ունի ութ հազար անցք՝ նույնքան, որքան մարդ մասնակցելու է դրա փոխանցավազքին: Բայց այդ անցքերը նաեւ այլ նշանակություն ունեն. դրանցով դուրս է գալու կրակի ջերմությունը: Եռանկյունաձեւ ջահն ունի 80 սմ երկարություն եւ կշռում է 800 գրամ:

## Վլադիմիր Հակոբյանը առաջին տասնյակում է

Դուբայում ընթացող շախմատի «Sheikh Rashid Bin Hamdan Al Maktum Cup» միջազգային ավանդական մրցաշարում երրորդ տուրից հետո Հայաստանի ազգային հավաքականի առանցքային խաղացող, գրոսմայստեր Վլադիմիր Հակոբյանը 2,5 միավորով եզրափակում է մրցաշարային աղյուսակի լավագույն տասնյակը: «Շեյխի գավաթի» այս խաղարկությունում հաջող է մեկնարկել մեր հանրապետությունը՝ ներկայացնող, շախմատի աշխարհում դեռեւս ոչ այնքան հայտնի միջազգային վարպետ Կարեն Գրիգորյանը, որը 2,5 միավորով չորրորդ տուրից առաջ զբաղեցնում է 11-րդ հորիզոնականը: Մեր մյուս շախմատիստները տեղ են զբաղեցնում հարյուրյակի մեջ:

## Ինչո՞ւ «Ռեալը» պարտվեց «Բավարիային»

Չեմպիոնների լիգայի կիսաեզրափակչի առաջին խաղում երեկ Մադրիդի «Ռեալն» արտագնա խաղում Մյունխենի «Ալյանց-Արենա» ստադիոնում 1:2 հաշվով զիջեց «Բավարիային»: Ինչո՞ւ: Հանդիպումից առաջ անհայտ անձինք ներթափանցել էին հանդերձարան եւ գողացել արքայական ակումբի աստղեր Ռոնալդուի, Բենզեմայի եւ Օզիլի հատուկ խաղակոշիկները: Իսպանական «Marca» թերթը գրում է, որ գողերն ընդհանուր առմամբ տարել են վեց զույգ խաղակոշիկ, որոնցից երեք զույգը Ռոնալդուինն էին: «Բավարիայի» ղեկավարությունը կատարվածի մասին ոչ մի մեկնաբանություն չի տալիս, թեեւ ստադիոնի հանդերձարանները կահավորված են տեսախցիկներով: Իսկ «Ռեալը» պատրաստվում է բողոք ներկայացնել ՈՒԵՖԱ:

## Բնության նվիրյալի նոր գիրքը




Մայրաքաղաքի Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում օրերս նշվեց անվանի բնապահպան, գրող, լրագրող Սուրեն Հայրապետյանի ծննդյան 65-ամյակը եւ կայացավ նրա «Ճախրանքի հմայքը» գրքի շնորհանդեսը: Դահլիճը նաեւ բնաշխարհի լուսանկարների ցուցասրահ էր դարձել: Հոբելյանին շնորհավորեց ու նրա վաստակն արժեւորեց Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը. «Այսօր յուրահատուկ օր է՝ շնորհիվ Սուրեն Հայրապետյանի, զարմանալի անհատականություն, որն արդեն քանի տասնամյակ չի փոխում իր սկզբունքը, չի աղճատում իր բնավորությունը, նա եղել ու մնում է մեր բնության պաշտպանը: Երբ ծառերը, կենդանիները մտնում են Կարմիր գիրք, Կարմիր գիրք են մտնում նաեւ բնության թեմաներով գրողները: Եվ բացառիկ է Սուրենի ներկայությունը, նաեւ այն ժանրային առանձնահատկությունը, որ բերում է նա մեր գրականություն»:

Կոմպոզիտոր, Երեւանի պատվավոր քաղաքացի Մարտին Վարդազարյանը նաեւ իր երաժշտական ողջույնն էր բերել վաղեմի բարեկամին, իսկ վաստակավոր լրագրողներ Տիգրան Լիլոյանն ու Վանիկ Սանթրյանը յուրովի արժեւորեցին Սուրեն Հայրապետյան գրողի ու բնապահպանի գործունեությունը:

Սուրեն Հայրապետյանը շնորհանդեսի ավարտին ասաց. «Ես միայն ձգտում եմ առանց հավելյալ պաճուճանքների ներկայացնել այն, ինչի հեղինակն ինքն է՝ մայր բնությունը: Պետք է միայն կարողանալ ընթերցողին ճշմարտացի եւ իրական փոխանցել այն ամենի զմայլանքն ու կարեւորությունը, ինչն այնքան հարուստ ու բովանդակալից, հոգեզմայլ է դարձնում մարդու կյանքը եւ եռանդ չխնայել դրանք պահպանելու, սերունդներին հասցնելու համար»:

Լ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

# Ինքնասպանությունը ելք չէ ստեղծված իրավիճակից

### Ըստ մասնագետների, 2020թ.-ին աշխարհում ինքնասպանությունների տարեկան թիվը կհասնի 1,53 միլիոնի

Օրերս Նոր Նորքի Սուրբ Սարգիս եկեղեցում «Մանանա» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ «Ինքնասպանություն. մահացու մեղք, թե փրկության միջոց» թեմայով քննարկում: Երիտասարդների հետ զրույցը վարեցին հոգեբան Մարինա Սահակյանը եւ Մայր Աթոռի միաբան Ժորա սարկավագ Սարգսյանը:

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության 2010-11թթ. տվյալների, տարեկան ինքնասպանություն է գործում մեկ միլիոն մարդ եւ մոտ տասը միլիոնը՝ փորձ կատարում: Կազմակերպությունը կանխատեսում է, որ 2020թ.-ին ինքնասպանությունների տարեկան թիվը կհասնի 1,53 միլիոնի: Ներկայացնելով ինքնասպանության հոգեբանական դրդապատճառները՝ Մարինա Սահակյանը նշեց, որ կյանքի զարգացմանը համընթաց՝ փոփոխություններին չհարմարվելու հատկությունը հանգեցնում է պաթոլոգիկ վիճակի, ինչի արդյունքում մարդը դիմում է խնդիրների լուծման անհաջող միջոցի՝ ինքնասպանության: «Դեռահասների մահվան հիմնական պատճառների շարքում ինքնասպանությունը երրորդ տեղն է գրավում՝ դժբախտ պատահարներից եւ դիտավորյալ սպանություններից հետո: Ինքնասպաններն ինտելեկտի հետ խնդիրներ չունեն. այդ քայլին են դիմում թե աղքատներն ու հարուստները, թե գիտնականներն ու արվեստագետները»,- փաստեց հոգեբանը: Նաեւ հավելեց. «Ապացուցված է, որ ինքնասպանների մոտ հույսը զրոյական մակարդակի վրա է լինում: Ինչպես Նիցշեն է ասել՝ «Մարդն ինքնասպան է լինում ոչ թե տառապանքից, այդ դրա անիմաստ լինելուց»:



Անդրադառնալով Հայաստանում ինքնասպանություն գործելու ցուցանիշին՝ հոգեբանը նշեց, որ տարեկան մոտ 400 նման դեպք է պատահում, մինչդեռ դիտավորյալ սպանությունների թիվը հասնում է 70-ի: Մ. Սահակյանի խոսքով՝ կյանքին վերջ տալ ցանկացողները միանգամից չեն կայացնում այդ որոշումը. «Սկզբում մարդիկ «կառուցում» են մահվան տեսարաններ: Հետո ի հայտ են գալիս ինքնասպան լինելու մտադրությունները՝ որոշակի պլանի մշակմամբ»: Հոգեբանի հավաստմամբ՝ ինքնասպանության պատրաստվողների 75 տոկոսն ուղղակի կամ անուղղակի կերպով իմաց է տալիս իրենց քայլի մասին՝ խոսելով կյանքի անիմաստ լինելուց: «Բայց միշտ չէ, որ ինքնասպանությունը ելք է: Հաճախ ծնողին պատժելու համար են դիմում այդ քայլին կամ փորձում են ուշադրություն գրավել ու աջակցություն խնդրել»,- նշեց հոգեբանը եւ հավելեց, որ ինքնասպանները եսակենտրոն եւ թույլ կամքի տեր մարդիկ են, քանի որ չեն պայքարում իրավիճակից դուրս գալու համար: «Ինքնասպանության որոշում կայացնելը ենթադրում է կամային հատկանիշի առկայություն, բայց դա չի նշանակում, թե այդ մարդն ունի փորձությունը հաղթահարելու ուժեղ կամք: Փիղը վախենում է մկից, բայց դա չի նշանակում, թե փիղը մկից թույլ է»,- ասածը պատկերավոր ներկայացնում է Մ. Սահակյանը:

Խոսելով ինքնասպանության մասին Հայ առաքելական եկեղեցու դիրքորոշումից, Ժորա սարկավագ Սարգսյանը նշեց, որ որեւէ ինքնասպանություն արդարացում չունի. «Ինքներս մեզ վրա ձեռք բարձրացնելով՝ աններելի մեղք ենք գործում Սուրբ Հոգու դեմ՝ բռնությամբ նրան մեր մարմնից դուրս հանելով: Աստծո ձեռքին են կյանքի սկիզբը եւ վախճանը: Ինքնասպանը կարող է մտածել, որ ազատություն ունի իր կյանքի վրա, բայց այդ ազատությունը ենթադրում է բարոյական պատասխանատվություն այն պարգեւողի՝ Աստծո առաջ: Ինքնասպանությունն Աստծո գոյության եւ հավիտենական կյանքի ժխտումն է»: Քննարկման մասնակից Հայկ Հարությունյանը նշեց, որ ինքնասպանության փորձ կատարողներին պետք է վերաբերվել ուշադրությամբ եւ կարեկցանքով. «Բոլորն էլ կյանքի որոշակի պահին մտածում են ինքնասպան լինելու մասին: Ընկերներիցս մեկն անհաջող փորձ էր արել, եւ դրանից հետո ես ավելի եմ սկսել կյանքն արժեւորել»:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ